



# ԲԱԶՄԱՎԵՊ

Ի ՏԱՐԻ, ՇԹԻՒ 9

1862

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1

ՀԱՅԱԴՐԻ

Ս. Սահակ Պարիս

28 Նաւասարդի. — 7 Սեպտեմբերի

**Կ**էս դարէ աւելի էր որ Հայաստան յերկու վիճակ բաժնուած ըլլալով՝ երկու ինքնակալ տէրութեանց վերատեսչութեան տակ, Պարսից և Հունաց, անոնց երկոր և աշխարհախոռով կոիւները զրեթէ բոլորովին դադրեցուցեր էր. Իայց Հազկերտ ԲՀազիւ թագաւորած Պարսից, յամի 439, անպատճառ պատերազմ հրատարակեց. հրաման տուաւ իր յառաջապահ սահմանակալ գունդերուն, որ մէկն Ի՞սորեստանէն երթայ Ա՞ծբնայ վրայ, մէկ այլն Ա՞մրապատականէն մժնէ՝ ի Հայաստան, Հունաց Հայկական բաժինը խլելու. Այս գունդս՝ Արասխայ հովիտը և Ա անայ պարատափիը անջրապետող միջոցէն փութալով կ'ենէ, Ծաղկուան վայելցութիւնները կոխկուելով կու փձացնէ, տօնահանդէս Իա-

գրեւանդայ բարձրատափին վրայ կուրանակի. և առանց ակնածութեան և գժոյ՝ կու գայնոյն իսկ անոր շինագլուխ տօնագլուխ տեղւոյն՝ Իագաւաւանին քով՝ իր զօրապետաց վրանները կու զարնէ: Որքան այլափոխեր էր Իագաւաւան այն առջի զուարթածազիկ պայծառութենէն, զոր անցեալ ամիս տեսնէիր, Հայկակ. և սակայն շատ ատեն չէր անցած այս երկու կերպարանաց մէջ. Հազիւ տան տարի էր՝ որ Ի՞րարատայ թագաւորին բունն չէր կանգներ՝ ի Շահապիվան, և ոչ իր զրօշներն ու վաշտերն երեւեին՝ ի Իագաւաւան: Իագաւաւան թէ և դեռ իր հեթանոսական անունը պահէր, բայց գրեթէ գար ու կէս առաջ ուսաւորչայ աջով օծուած էր, Տրդատայ և իր աշլով կուրահամբ բանակին հռն մղրտուած

ատեն. և Տարօնոյ գիցաւանին հետ՝ նուիրեալ էր Ս. Յովհաննոս Մկրտչի. որոյ անունը առնլով իր սրբեալ ձաւ կատուն վրայ թագաւորն Տրդատ, իր յիշատակն այլ խառնեց Մկրտչին հետ. անոր համար շատոնք կարծեն թէ յանուն Յովհաննու-Տրդատայ թագաւորի՝ Ս. Յովհաննէս կոչուի մինչեւ ցայժմ Բաղրեանդայ Խ-Հ-Գ-Լ-Ա- անուանեալ տաճարն և վանքն. և 'ի միացեալ յիշատակ Տրդատայ, լուսաւորչի և Յովհաննու Մկրտչի՝ Հայոց ամենէն սրբազն ուխտատեղեաց մէկն է եղած. և հիմա մեր աշխարհ-քին սրբազն տաճարաց ամենէն վսեմագոյնն է աչեղակերպ մեծութեամբն և հնութեամբն. գեղեցիկ ծնունդ Ճարտարապետութեան մեր Խարայէլ վարպետին և առատաճեանութեան Հերակլի կայսեր. որոյ շինութեանն աւարտը և նաւակատիքը Հայադիրն նշանակէ 'ի 28 նաւասարդի (որ է 7 սեպտեմբերի) 639 ամին: Ի. յսօրուան քեզի յիշելքս այլ, Հայկակ, զարմանագէպ զուգութեամբ նոյն օրաթուին նշանած է և նոյն տարեթուին, այսինքն յեօթն սեպտեմբերի յամին 439, Զիջդ 200 տարի առաջ: Ի. յս ատեն Բագաւանի լու Յովհաննէսն կայսերակուռ կերպարանքը չունէր, սակայն անշուք շինուած մ' այլ չէր, Պրիգորի և Տրդատայ գատակերտն ըլլալով. վասն այսորիկ ոչ միայն պաշտօնասէր ժողովուրդը, այլ և ժողովրդապետք և հայրապետք գային պատուելու և պաշտելու զտեղին յիշատակաց:

Եւ ահա հիմ' այլ Յազկերտի վարագայեալ զօրաց արշաւանաց ատեն, հոն Բագաւանայ խաղաղաւետ խորաններու քով քաշուած կու նստէր, և երկայն զիշեր մը լուսապահող լապտերի մը պէս՝ որ դանդաղ առաւօտուն մօտ սպազալով կու մարմի, այնպէս կու հսկէր 'ի գերեզման զոդացեալ իննսնամեայ ծերունի մը, բայց աստուածափայլ աստուածապատիւ ծերունի մը, որոյ նման՝ ամենայն բարեմասնութեամբքն և ծայրացեալ հասա-

կաւն, ոչ յառաջ և ոչ յետոյ չերեցաւ 'ի Հայաստան: Այս է թոռն թոռնորդւոյ որբոյ լուսաւորչին մերոյ, մեծ կաթուղիկոսն Հայաստանեաց Սւաւակ ՊԱՐԹԵՒ: Ամէն կենսագիրքն վկայեն թէ ծնած և մեռած է մի և նոյն ամսաթուի մէջ նաւասարդի 30ն. վախճանած տարիին յայտնի նշանակեալ ըլլալով, և շաբաթուան օրն այլ (հինգշաբաթի), կ'իմանամք որ այդ նաւասարդն շարժական ամսովն է, որոյ 30ն էր 28 անշարժ նաւասարդի, յամին 439, և 7 սեպտեմբերի. իսկ իր ծնած տարին՝ ըստ շարժական տարւոյ նաւասարդի 30ն քսան կամ 21 օր այլ ետք էր, որով լու լու ահակայ ծնած օրն կ'ըլլայ սեպտեմբերի 27, համարելով թէ ծնած տարին է Վրիստոսի 452-55 թուոց մէջ: Յայսմաւուրաց մէկն կ'ըսէ Այսակայ համար, Կեցեալ ամս ծզ, (56) զօր ուղղազրելով ձզ մեզի կ'ընծայէ կենաց տարիքը 86, և ծնած տարին 354. իր աշակերտքն վկայեն թէ հասաւ 'ի յերկար ծերութիւն.. սակայն անտեղի է պատմչաց ունաց ըստածն՝ թէ 110 կամ 120 տարի ապրած ըլլայ լու Այսակ. վասն զի այդ թուով ծնունդն կ'ելնէ յ'319 կամ 329 թիւն Վրիստոսի, յաւուրս լու սաւարչի: Բաւական է լու Այսակայ 86-90 տարուան կենաց՝ դեռ սովորականէ երկայն՝ շրջան մ'այլ. որ և երկարութենէն աւելի նշանաւոր եղաւ իրեն պատահած դէպքերով և անձինքներով. որով ոչ միայն ազգային պատմութեան այլ և ընդհանսաւր նոյնաժամանակ պատմութեան մէջ լաւ նշանելի է. ազգայնոց մէջ՝ թէ քաղաքական թէ եկեղեցական և թէ ուսումնական տեսութեամբք, իսկ օտարաց առջեւ՝ աւելի եկեղեցական մերձաւորութեամբն: Այսակայ երկայն կեանքն և երկայն կաթուղիկոսութիւնն (51 տարի), սնունդն և զարդացումն 'ի Անսարիա և 'ի Անստանդրուպոլիս, զինքը մերձաւոր և ծանօթ և շաղկապը ըրբին այն մեծամեծ Անձանց՝ որք եկե-

զեցւոյ մէջ վեհագոյն յեղանակ մը բու-  
լըրեն, անոր ամենէն գերապանձ հայ-  
րապետքն ըլլալով։ Ի՞յս յեղանակս  
“այն ատենն է, կ'ըսէ Ա իւմէն, որ Ե-  
“կեղեցին ընկերական օրինօք այլ հիմ-  
“նեալ հաստատեցաւ և հաւարակային  
“տէրութիւն մը դարձաւ . այն ատենն  
“է՝ որ 'ի պէրձախոսութեան և 'ի դըլ-  
“րութեան յառաջ բերաւ այն վսեմէ  
“պայծառ հանձարները, որոց ոչ եր-  
“բեք նման գտուեցան հաւասարդղք՝  
“բայց եթէ Պաղպիոյ ժէ դարու սըր-  
“բազան քարոզիչքն։ Որչափ մեծա-  
“մեծ մարդիկ, որքան գերագոյն ձար-  
“տասանք ելան՝ Ա մանասէն մինչ  
“'ի Ա ։ ( ) գոստինոսի միջոցն . ինչ հը-  
“րաշաղօր մուտարական շարժմունք բու-  
“լոր հասմէական աշխարհքին մէջ .  
“ինչպիսի տաղանդներ խորհրդական  
“մրցմանց մէջ հանդիսացեալ . ինչպի-  
“սի ոյժ մարդկան՝ հաւատոց վրայ բա-  
“նեցուցած . ինչպիսի կերպարանափո-  
“խութիւն բովանդակ ընկերութեան,  
“որ եղաւ ձայնիւ այն կրօնից՝ որ դետ-  
“նադամբաններէն կու վերանայ 'ի  
“գահոյս Ակսարուց, որ ուզածին պէս  
“'ի գործ ածէ՝ իր մարտիրոսաց արեամբ  
“մաշնցուցած սուրը . . . Ո՞տաց և ա-  
“րիութեան ամենէն ամօթալի ցածու-  
“թեան իջած ատենն է, երբ ներքի-  
“նիք կառավարեին զինքնակալութիւն,  
“և բարբարսոք վրդովիչին, այն ա-  
“տենն էր որ Աթանաս մը, Բարսեղ  
“մը, Պարքանդացի մը, Ասկերե-  
“րան մը, Ամբրոսիոս մը, ( ) գոստինոս  
“մը՝ կու լեցընեն ամենէն մաքուր բա-  
“րոյականը և ամենէն գերագոյն պէր-  
“ձախոսութիւնը . Ո՞իայն ասոնց հան-  
“ձարն կանգուն մնաց ինքնակալու-  
“թեան ընկնալու ատեն . կործանմանց  
“և փլատակաց մէջ ասոնք՝ հիմնարկուք  
“կ'երեան . և յիրաւի, վասն զի ձար-  
“տարապետք էին այն մեծ կրօնական  
“չինուածոյն՝ որ պիտի փոխանորդէր  
“հասմէական ինքնակալութիւնը . . .  
“Ա՞եր Հոյոց աղղին այլ հին թագա-  
“ւորութիւնն և ինքնատիրութիւնն վեր-  
“նալու ատեն՝ Ա ։ Ո՞աչակ չէր որ զազգն

և զեկեղեցին կանգուն պահեց՝ մինչե-  
“ցայժմ . (թէրևս աւելի քան) հաւասար  
“այդ յօյն և լատին սուրբ Հարոց, որոց ո-  
“մանց<sup>1</sup> կենաց վերջին կայծերը տեսաւ

1. Ս. Սահակայ ծնած տարին (354) և քիչ ա-  
միս վերջ (13 Նոյեմբեր) ծնաւ արևմտեան (և թէ-  
“րես ընդհանուրը) եկեղեցւոյ մեծագոյն վարդա-  
պետն՝ Ս. Օգոստինոս . անոր վարդապետա-  
կիցն՝ Ամբրոսիոս և հերոնիմոս Համեայ պա-  
տանեակե էին (ծնեալք յ'340) . Ասկերերան՝ որ Ս.  
Սահակէն 10 տարի վերջ սկսաւ հայրապետութիւն  
և անկէ 32 տարի առաջ լմնուց, տասնամեայ մա-  
նուկ էր (ծնած յ'344) : Ս. Սահակիր պապուն պա-  
պուն կենդանի օրհութիւնն առած է, վասն զի Ս.  
Վրձանէս վախճանեցաւ հաւանորէն յամին 355.  
յաջորդ տարին (356) Եգիպտասի և ամենայն միան-  
ձանց արեգակն մոտաւ, սուրբն Անտոնիոս 105 տա-  
րուան . տարի մը ետև, 357, նոյնպէս հարիւրը ան-  
ցած վախճանեցաւ Ռափու՝ որ Կիկիոյ Ա. ափեկերա-  
կան ժողովյն գահագլուի բաղմէր էր . այն ժողո-  
վյն և բոլոր արևելեան Ս. Հարց պարագլուին  
մէծն Աթանաս . Ս. Սահակայ պատանութեան ա-  
տեն իր գահուն վայ կ'ենէր կ'ենէր . (Դ 373) և  
թէրես ընդուներ էր զնա յԱզեքսանիզրիա իբրև  
թռոն իրէն աթոռակից հայրապետաց . ևս առա-  
ւել Ս. Կիւրեղ յԵրուսաղէմ . որ վախճանեցաւ  
Ս. Սահակայ կաթողիկոսութենէն Յ տարի առաջ  
(386), և իր յաջորդն Յովհաննէս հայրապետ : Մե-  
ծափառ և վայելքարանն Բարսէղ՝ որ Մէծին Կեր-  
սիսի հետ կարդ առեր էր, անշուշտ անոր որդուցն  
մէծարող գասախարակ այլ եղաւ, և իր կարդակիցն  
եղերական մահը ողբալով կու սպասէր որ փախա-  
նակ Կորճացի Սահակայ Կերսիսածին Սահակն  
իրմէ առնու իր հարց նման կաթողիկոսութեան  
ձեռնադրութիւնը . բայց կանխեց մահն (379) . որ  
և յաջորդ տարին (380) մարեց Աստրւոց անա-  
պատաներուն արիւը, զԱ . Եփրեմ: Մէծին Բարսէղ  
հոգեկից տարեկից և պատուակիցն Գրիգոր Աս-  
տուածաբան՝ վախճանեցաւ Ս. Սահակայ կաթո-  
ղիկոս նստած տարին (389) . իսկ անոր (Բարսէղ)  
հարազատ Եղբայրն Գր . Կիւսացի՝ անոր կաթողի-  
կոսութեան 12դ տարին (400) . արիասիրան Ամշ-  
րոսիոս յիններորդ տարի կաթողիկոսութեան  
Սահակայ (397) : Քիչ մ'ետև (403) վախճանե-  
ցաւ Ս. Եպիփան իբրև հարիւրամեայ . Երուսա-  
լեմի հայրապետն Յովհաննէս 'ի 25դ տարին (414).  
Թէոփիլոս Ազեքսանիզրիացին յ'30դ տարին (418).  
Ս. Հերոնիմոս յ'32դ տարին (420) . մէծն և տա-  
րեկիցն Օգոստինոս ի42դ տարին (430): Ակակ  
Բէրիոյ եպիփանուոսն 112ամեայ 'ի 44 տարին կամ  
այլ ետև . իրմէ քիչ առաջ ետև երկու Ակակը  
այլ, եպիփանուոս Ամբայ և Մէլիսաֆինոյ: Վերջա-  
պէս այն ամենայն գիտուն և սրբազան հրաշալի  
անձինքն, որք 'ի կիսոյ Դ գարուն ց'կէս և դա-  
րու փայլեցան յաշխարհի, և եկեղեցւոյ Հարք և  
սիմէ հաստատութեան կ'ըսուին, ամէնքն այլ  
անցան Ս. Սահակայ աչաց և կենաց առնենէն . իր  
գահակիցն և երբեմն գահագլուին՝ քաջահաւատան  
Փիրմոս արքեպիսկոպոս Կեսարիոյ՝ վախճանեցաւ  
նոյն իսկ Ս. Սահակայ վախճանած տարին . և այն  
մէծէրէն՝ միայն Ա. Կիւրեղ Ալեքսանդրացի և Ա.

իր նորավառ աւօքն , ոմանց պայծառագոյն օրերուն հասաւ , ոմանց կենակից և աթոտակից եղաւ , շատերուն՝ և նաև իրմէ վերջ սկսողներուն՝ շրջանին լընցընելը տեսաւ , և հազիւ զոմանս թուղուց դեռ իրենց պայծառ աթոտին վրայ : Ծսոնցմէ ոմանց , և անոնց 150 լնկեր հայրապետաց Ա. Կոստանդնուպօլոյ և Բ. տիեզերական ժողովոյն , յամին 381 , հաւանօրէն ականատեսեղաւ , իր կաթողիկոսութենէն ութ կամ ինն տարի առաջ , երբ թերես սուրբ կարդ այլ առած չէր , բայց իբրև որդի և թոռնորդի սուրբ քահանայապետաց և վկայից՝ ծանօթ էր 'ի դրան կայսերաց : « Քահանայապետութենէն առջի կեանքը , 35 տարի , աւելի հայաստանէ դուրս քան ներսը անցուցած կ'երեսի : Իսուր մեր նախնի լուսաւոր շաղարմ հայրապետք՝ Հունաց մէջ կըր թութիւն առած են . մանաւանդ » . « Երսէս , որ նախ 'ի Կոստանդնուպոլիս առջի կաթողիկոսութեան ատեն Ա. արդան Ա. ամփիկոնեան նախարարին Ա. անդուխտ դուստրը կին առաւ , ըստ այլոց (որ աւելի հաւանելի է) Կոստանդնուպոլուսոյ մէջ Ծսպիոն անուամբ ազնիւ (Հոյն) իշխանազին դուստրը , որ եյտ երեք տարւոյ վախճանելով՝ թողուց զի երսէս այրի պատանի մը . բայց անոր հասակին և մեծ սրտին միսիթարանք , և յաւիտենական միսիթարանք՝ միածին որդեակ մը , զմեծն Ս. Ա. Ա. : Ծաերես աշխարհքիս մէջ չէ եղած քսն զասոնք՝ վեհափոյն հայր մը վեհափունի որդւոյ : Ծստուած միայն մեր եկեղեցւոյ շնորհեց 140 տարւոյ չափ՝ Պ. Ա. տացւոց նման՝ քահանայապետական պայշաղատութիւն , որք վեց ազգ զիրար յաջորդեցին :

Ա. ակ 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Պրոկոլ՝ Ասկերերանի աշակերտն և աթոռոյն ժառանգն , երկուքն այլ նեստորի գլխահար ախոյեանք , և բարեկամք և թղթակիցք Սահակայ՝ և տարւոք կրսերք՝ իրմէքանի մը տարի ետև միացան իրենց փառաւորեալ ժողովակցացն յերկին : (Կիւրեղ + 444. Պրոկոլ + 446):

Կեսարիա վարժեցաւ իր ցեղին և աշտիշանին յարմար ուսմանց . յունարէնը իբր մայրենական լեզու գիտէր , և ուսմամբ այլ այնքան հմուտ էր անոր քերակամնական արուեստին , որ նոյն իսկ բնիկ Հունաց վարդապետներէն շատը կու գերազանցէր <sup>1</sup> . ասորերէն այլ գիտէր անշուշտ չափաւորապէս . պարսկերէնն այլ 'ի բրու տիրող լեզու 'ի հայս . իսկ իր և մեր բնիկ հայերէն լեզուին՝ թագաւորն կրնայ ըսուիլ , կամ առաջին հայէաբան . վկայ՝ հայերէն աստուածաշունչ գիրքն , որ իր ոսկի զրչէն և մեղք լեզուէն առած է իր մեծագոյն ողորկութիւնը և պայծառութիւնը , քան զոր քաղցր և կակուղ հայախօսութիւն չկայ ազգերնուս մէջ . և թերես ըստ այսմ մասին՝ քան այլովքն՝ արժանապէս գերազանց դասուի քան զամենայն թարգմանութիւնս || . Պարոց : Կը աստուածաշնորհ հայրն՝ Ա. եծն Երսէս , լաւ զիտնալով և թերես տեսնելով այլ իւր անարժան հօրը . Ա. թանագինէի , և հօրեղբօրը (Պապայ) անվայել վարքը , և խանգարեալ արքունեաց հրապորքը , չեմ տարակուսիր որ թողեր էր իր գեռաթոյս ծնունդը զգոյշ տեղ և զգոյշ վարժապետաց ձեռք . որոց մէջ մնալ աւելի ընտրեց Խասհակ այլ , քան հօրը ահեղատիսուր մահուընէն ետեւ՝ փութալ անոր գահը ենել հազիւ 20ամեայ հասակաւն , ինչպէս || . Պարիգորիս իր պապուն հօրեղբօրյն (15 ամեայ) , կամնոյն իսկ իր հայրն՝ Երսէս , որ չէր աւելի քան զ' 25ամեայ նորահաս երիտասարդ մը՝ գահը ելած ատեն , և ոչ աւելի քան զ' 35ամեայ 'ի գերեզման իջած ատեն <sup>2</sup> :

Ա. Ա. ակայլ կանուխ կարգուեցաւ , Ուսաւորչայ աթուոյն ժառանգ մը աւելցնելու համար . բայց Ծստուած սահմաներ էր իրմով դադրեցնել այն յաջորդութիւնը . և հրաշալի երկայն տեսիլքով մը յայտնեց անոր՝ մինչ դեռ

1. Ղազար Փարպեցի :

2. Ամենայն գաւազանագիբք մեր և պատմիչ Ա. Երսիսի 34 տարի կու տան քահանայապետութեան . այդ թիւնիր կենաց տարիքին տալու է :

սարկաւագ էր, և Ա պարզապատայ  
մայր եկեղեցւոյն, Ա ջմիածնի մէջ, հըս-  
կումն կ'ընէր աւագ հինգշաբաթի զի-  
շեր մը, իր ազգին եկեղեցւոյն հանդի-  
պելիքն ուխտապահ և ուխտազանց հա-  
ւատացելոց գործովք: Ա իայն զստրիկ  
մ' ունեցաւ Ա . Ա հակ յամուսնոյն,  
զոր անուանեց իր անուամբն Սահակա-  
նոյշ, և տուաւ 'ի կնութիւն Համազաս-  
պայ Ա ամիկոնէից տեառն<sup>1</sup>. 'ի Համա-  
զասպայ ծնան իրեք սահակավայել  
կորիւնք, կարմիր Վարդան, Համազաս-  
պէան և Հմայէաչ. որոց առաջինը իրեն  
որգեգրեց իրրե հարազատ ժառանգ.  
բայց Ա արդան այլ իր սուրբ պապուն  
պէս արու զաւակ չունեցաւ՝ իր Պատրիկ  
կնոջէն, այլ աղջիկ մը, Վարդէնի և Ծո-  
շանիկ կոչուած, զոր զգուեց Ա եծն Ի-  
սահակ իր պապական ծնդաց վրայ, և  
սեպէց իրեն պայազատ, թողլով անոր  
այլ իր սեփական հայրենի ժառանգու-  
թենէն<sup>2</sup>. Հաւանօրէն իր թոռան թո-  
ռունքն այլ տեսաւ Ա . Ա հակ, այս-  
ինքն Շուշանկան շառաւիղքն, որ՝  
ափսոս, դժնիկ մը հետ զուգեցաւ,  
Ա ազգենի Ա քաց բղեշխին. սակայն այ-  
նով այլ աւելի ինքն զարմանալի և տօ-  
նելի եղաւ. Ա արդանայ մէկայլ եղարց  
ցեղն արու զաւակօք յաջորդեցինչուան  
ժԿ դար (թերեւս անկէ ետե այլ), և  
Ա . Ա հակայ արեամբը Պահլաւունի  
ըսուեցաւ. արեան հետ արդիւնքն այլ  
ժառանգեց արժանապէս. և ԺԱ-ԺԲ-  
դարերու մէջ շատ արժանաւոր անձինք  
ընծայեց աշխարհի և եկեղեցւոյ. և  
այսպէս կատարեցաւ իր տեսլեան մէջ  
հրեշտակին խոստումն, թէ վերջի ա-  
տենները իր ցեղէն նորէն քահանայա-  
պետներ պիտի ենէին, և էին Պարի-  
կորեանքն և Ա երսիսեանք, յետ կիսոյ  
ԺԱ դարու ցվերջ ժԲ դարուն:

Ա . Ա հակայ վարքն չորս նշանա-  
փայլ երեսիթ կ'ընծայեն նկատմամբ

1. Յորմէ կու հաստատուի թէ ինքն չէր որդի  
դստեր Մամիկոնէից տեառն:

2. Որոյ մէջ յիշատակուի աւետարան մ' այլ  
իր պանչելի մատանց իսկագիրն. կ'ըսուի թէ  
ընիկ ձեռօքն շատ գորեր պիլ գրեր էր:

իր անձին և ազգային պատմութեան.  
առ ուսումնական պայծառութիւն կամ  
հայերէն գալրութիւն, որ իր գործա-  
կցութեամբն զարդացաւ. — թ . Եկե-  
ղեցական կարգաց վայելցութիւն, որոց  
նոյնպէս հիմնադիր կընայ ըսուիլ, յետ  
Ա . Ա ուսաւորչն. — դ . քաղաքագի-  
տական կամ քաղաքական տեսչութիւն,  
որոյ մասնակից եղաւ հաւասար իր հօրն,  
և աւելի քան զամենայն օտար հայրա-  
պէտու. — ե . անձնական առաքինու-  
թիւնք, կամ նուիրական կեանք: Ա-  
սոնցմով կ'երեւի սուրբն Ա ահ-  
խարհքիս մէջ փայլած ամենէն պայծառ  
հոգւոց մէկն. խորին տեսութեամբ, հա-  
րուստ հանձարով, տաք սրտով, գոր-  
ծունեայ կամօք, վսեմ զգացմամբք:  
Ա յս չորս գլխաւոր զիտելեաց վրայ  
կ'ուզեմ դարձնել աչքդ, Հայկակ,  
թէ և համառօտ տեսութեամբ, քան  
պատմական դադարմամբ:

Որչափ որ Ա . Ա հակայ ժամանակն  
փառաւոր և պայծառ էր ըստ եկեղե-  
ցական կարգի, այնչափ այլ անշուք և  
անշնորհք մերքնիկ աշխարհին քաղա-  
քական վիճակն. իր երախայութեան  
տարիները, նոր յախոռ նստեր էր Տի-  
րան թագաւոր, սկիզբն ազգերնուու  
կործանման, իր անքրիստոնէայ վատ  
և թոյլ վարուք. որոյ դէմն ջանալով  
Ա . Յուսիկ՝ պապահայր Ա ահակայ,  
զոհ եղաւ. Տիրանայ յաջորդն Ա քառակ՝  
չարագոյն քան զհայրն, վեհագոյն քան  
զիուսիկ քահանայապէտ ունեցաւ՝ ա-  
նոր թոռը, Ա . Երսէս, որ ժրու-  
թեամբ ջանաց այնպիսի մոլի անձին  
իշխանութեան ատեն թէ զաշխարհքն  
թէ զեկեղեցին չէն պահել. նոյնպէս  
անկէ այլ մոլի որդւոյն ատեն, Պապայ,  
որոյ անօրէնութեանն ինքն այլ զոհ ե-  
ղաւ. Իրմէ վերջ Ա Յ տարւոյ չափ Հայ-  
աստանի քաղաքական շփոթութեանց  
միջոց, Պապայ, Ա արազգատայ, Ա ք-  
շակայ և Ա աղարշակայ և Ա յոսրովու-  
թագաւորութեանց ատեն՝ չորս կա-  
թուղիկոսք նստան օտար ցեղէ. ասոնց  
վերջնոյն ատեն Ա յոսրով Գ յաջողեցաւ  
ազգին յերկու բաժնուած նախարար-

Ները միաբանելով հանդարտեցնել ըզ-  
հայաստան։ և յամին 389 նստուց  
յաթոռ մեծին՝ յերսիսի՝ անոր արժա-  
նաժառանգ որդին, զմեծն Խսահակ,  
որ այն ատեն իր հօրը վախճանած տա-  
րիքն ըլլալով և անոր ձրիւքն և շնորհօք  
զարդարեալ և յաւելեալ կերպով  
մ' այլ անոր քահանայապետութիւնը  
նորոգեց և յառաջ վարեց ամբողջ կէս  
դար։ Խյոսրով քան զայս մեծ շնորհք  
չէր կլնար ընել իր ազգին։ և այնքան  
մեծ եղաւ և զովելի շնորհքն, որչափ  
որ անով իր անձնական շահուն վնաս  
բերաւ։ վասն զի այնալիսի կաթուղի-  
կոս մը իր աթոռոյն հեղինակութե-  
նէն զատ, թագաւորաց ազգական այլ  
ըլլալով՝ ազգին վրայ մեծ ազդեցու-  
թիւն պիտի ունենար։ այս բանս վախ  
բերաւ Պարսից թագաւորին։ և որով  
հետեւ Խյոսրով առանց իրեն իմացնե-  
լու՝ այնալիսի նշանաւոր անձ մը հայոց  
սրբազն գահուն վրայ բարձրացուց,  
զերկուքն այլ պարտաւոր սեսեց։ և զի  
Խյոսրով ուրիշ ինքնազլուխ գործեր  
այլ կ'ընէր, և ինչուան իրմէ գլուխ  
քաշելու և Հունաց հնազանդելու կու  
սպառնայր, խաւրեց իր Ի՞րտաշիր որ-  
դին որ զԽյոսրով վերցընէ ՚ի թագա-  
ւորութենէ, զլ)։ Այսակ այլ ՚ի հայ-  
րապետութենէ։ Խյոսրով խաբուելով  
և սախպուելով Ի՞րտաշիր ձեռքն ըն-  
կաւ։ և տեղը դրուեցաւ իր եղբայրն  
ԱՌամշապուհ (390)։ որ քան զեղ-  
բայրն զզուշաւոր և վախկոտ գտուելով  
ինքնագլուխ բան չէր ըներ։ անոր հա-  
մար չհաւանեցաւ (։ Այսակայ խընդ-  
րոյն այլ, որ գտերը (Այսականոյշ) ա-  
ղաշանօք խնդրեր էր իր փեսայն հա-  
մազասպ Ամիկոնեանը սպարապետ  
դնել հայոց, փոխանակնոր վախճանա-  
ծին (Այսակայ ասպետի)։ Ի՞ր բանս  
երկրորդ պատճառ մ'եղաւ (։ Այսա-  
կայ՝ անձամբ երթալու առ թագա-  
ւորն Պարսից և միտքը շինելու։ Դնաց  
՚ի Տիգրան, տեսաւ արքայից արքայն,  
հաճելի և պատկառելի եղաւ անոր։  
խնդիրքները ընդունեցաւ, զհամա-  
զասպ ոչ միայն սպարապետ կարգեց,

այլ և հայոց նախարարաց մէջ բար-  
ձրացուց պատւով ինչուան ՚ի հին-  
գերորդ գահն։ ուրիշ պարտաւոր սե-  
պուած նախարարաց այլ ներումն ա-  
ռաւ, և անոնց պատւոյ կարգերը նո-  
րոգելով՝ դարձաւ առ ԱՌամշապուհ,  
և ասոր ձեռքով այլ հաստատել տա-  
լով հայոց Գահնամակը, իր սուրբ հօ-  
րը նման նորէն նորոգիչ եղաւ քա-  
ղաքական գասակարգութեանց այլ, և  
ևս առաւել աշխարհքին խաղաղու-  
թեան և շինութեան։ Ի՞այց քաղաքա-  
կան խնամքը թողլով առ խոչեմ թա-  
գաւորն ԱՌամշապուհ, ինքն սկսաւ  
մեծ հոգով՝ և ջանքով իրեն վայլածը  
հաստատել և աձեցնել, եկեղեցական  
բարեկարգութիւնքը, որ շատ տարի-  
ներէ վեր խանգարեր էին շատ տեղ, և  
անարժան սովորութիւնք տիրեր։  
Աղջութեան համար բաւական գիտու-  
թիւն և հմտութիւն, կամք և ոյժ ու-  
նէր։ բայց ուղղութիւնը հաստատուն  
և մնայուն ընելու համար՝ կարեոր  
հնարք մ'այլ կար՝ որ կու պակսէր իր  
հօրը, և Հուսկան և Լուսաւորչի ան-  
գամ։ այսինքն է ազգային լեզուի դրա-  
րութիւնն, որ ՚ի վազուց խափանեալ  
էր, բնիկ գիր խափանուելուն համար։  
և անով՝ օտար լեզուներ (յոյն, ասո-  
րի և պարաիկ) սովորիլ ստիպէին թէ  
աշխարհականք և թէ եկեղեցականք՝  
իրենց արտաքին և սուրբ պաշտամանց  
մէջ վարելու։ և ամէնքն այլ հաւասար  
լեզուաց յաջողութիւն չունենալով՝ ՚ի  
հարկէ իրթութեան և կրօնից մեծ պա-  
կասութիւն կ'ըլլար։ Պէտք էր հայե-  
րէն գիր հնարել։ Ի՞յս հնարքը Ի՞ո-  
տուած մեր քահանայապետին մովսի-  
սանման գաւաղանին չփոխուաւ, այլ ի-  
րեն ահարոնանման աջակցին։ Ա՞ես-  
րովպայ։

Ի՞յս անձը դու լաւ կու ձանաչես,  
հայկակ, որ յամենայնի Ծակից և գոր-  
ծակից եղաւ մեծին Այսակայ, զրե-  
թէ և կենակից։ (անկէ հինգ ամիս ե-  
տեւ յաշխարհքէ ելաւ և անկէ այլ քիչ  
մը առաջ յաշխարհք եկած կ'երեի)։  
նախ Այս յերսիսի փոքրաւոր էր, և ա-

նոր վսեմական մահուն ատեն ըսածնել ըըմտիկ ընելով՝ աւանդեց յետնոց. յետոյ Հայոց թագաւորին արքունիքը մը տաւ քարտուղարութեամբ, լսւ թարգմանիչ և գրիչ ըլլալով. քանի մը տարիէն՝ արքունիքը թազուց, առանձնաց յաւ յաստուածախոհութիւն և 'ի Տըդնութիւն. և հոգին ու միտրը աստուածային շնորհօք լուսաւորելով, ելաւ (յամին 396) քարտզելու և վարդապետելու զանազան կողմեր, առաւել 'ի Աիւնիս: Ի՞յս վարդապետութեան ատեն աւելի քան զաւելի ճանցաւ ազդային զրոց և դարրութեան հարկաւորութիւնը. որոյ համար եկաւ խորհրդակցելու ընդ սրբոյն Աահակոյ, և տեսաւ որ արդէն կամ ուղիկոսն այլ նոյն մտածութեամբ եպիսկոպոսաց ժողովոյ մէջ է (403). բայց ուրիշ եկեղեցական հոգեր վրան առած ըլլալով. յանձնեց Աեսրովայ մասնաւոր խնամքավական այս բանիս ետևէն ըլլալ. և ինքն անձամբ առ թագաւորն երթալով զնա այլ յորդորեց յայս ջանս: Ի՞արեւեր թագաւորն այլ եթէ գանձով և եթէ քաղաքական ծանօթութեամբք օդնութիւն ըրաւ, մանաւանդ որ ինքն այլ պէտք ուներ լսւ քարտուղարաց, և Ո. Աեսրովայ յարքունեայ երթալէն ետեւ՝ յարմար մը չեր գտած: — Երկրունինք այս պատմութիւնս. Ի՞սորի Դանիկ եպիսկոպոսի մը քովի հին հայերէն գրեր կային, անոր խաւրեց զի. Աեսրովայ (404), որ առաւ բերաւ 'ի Հայս, և երկու տարի աշխատելով, դպրոցաց մէջ սովորեցնելու տղայոց, ճանցաւ որ անթաւական են այն Դանիէլու նշանագիրն, և յետ ուրիշ շատ հնարից և սովորութեանց, ինչուան 'ի Աամսս երթալով հոն աւելի աղօթ-

1. Մեր գրերուն գտնուած տեղն հետաքննութեան արժանի է. ոմանք Սամոսի տեղ Սամոսափառ այսինքն Սամուսատ քաղաքը կարծեցին. ոմանք այլ 'ի Բարսւ եղած է կ'ըսեն այս գիւտս. սույգն 'ի նախնեաց վկայի Սամոս կղզն. (Սուսամ-ատասը). Ս. Մեսրովայ Պերութէն կամ Սիդոնէն կամ մատ նաւահանգստէ մը նոււելով բոլոր Փ. Ամիս հարաւային եզերքը պատած է ընդ Աիւրկարական ծով, և պամատեան կազմը կըլեաց

քով և Կ'ստուծոյ յայտնութեամբ քան մարդկային հնարիւք՝ գտաւ և յարմարցուց իր և մեր փափագելին (յամի 406), և ձարտար յոյն գրչի մը ձեռօք մոյընելով 'ի ձեւ, (որ Աւրովութեան դառնակամ էր եւագիրի կ'ըսուին հիմա), իրը փորձի համար ձեռք զարկաւ թարգմանելու և գրելու հայերէն Աողոմնի Աակաց գիրը: Ի՞յս եղաւ սկիզբն թարգմանութեան Ա. Վրոց, բացական և անծանօթ կղզւյ մը մէջ, այն տարին՝ յորում Պաղեստինոյ առանձնութեան մէջ Ա. Հերոնիմոս դադրեցուց իր գրիչը սուրբ գրոց լատիներէն (վուլկադա) թարգմանութենէն: ... Հոսքեղի թողում աղզիդ և նախնեացդ արդար և համաշխարհական խնդութեան և հանդիսաց մասնակից ըլլալ. կ'ուզես Ա. Աեսրովայ հետ փութամ 'ի հայրենիքդ, իբրև 'ի Աինա լեռնէն իջնելով աստուածազիծ պատգամներով. կ'ուզես թագաւորին և կաթուղիստին. և բոլոր մեծաց և փոքունց հետ անոր գիմացն ելիր, օրհնել, համբուրել և ընդունել այն անտես մուացդ հետ խօսող և լուսաւորող գծիկները. և մի առ մի նկատէ, աեւս դպրոցաց կանգնումը, աշակերտաց ժողովումը, փոյթ և ջանքն, իբրև երկայն ծոմանսնութենէ ետեւ պահոյ պինակները կոտրող և զատիկ ընողը՝ յոյն և ասորի պինակիտները թողով՝ հայերէն այբուբենը գրող ու սովորող մեծ ու պղտիկները. անոնց մէջէն՝ Աողոմնի 60 զօրաւորաց պէս՝ բոլոր աշխարհէն ջոկած 60 ամէնընտիր աշակերտքը, ուշիմագոյնք, փափկաձայնք, երկարողիք, որք զրկուին յլ զեքսանզրիա, յլ թէնս, 'ի Աոստանդնուպոլիս, յլ Եգեսիա, և յայլ ուսմամբ անուանի քաղաքս, լսւ սովորիլ յոյն և ասորի լեզու, ժողովել և թարգմանել սուրբ և պիտանի գըրքեր:

Ի՞յս գիւտս և յեղափոխութիւնս մէջ մաեր է 'ի Սամոս, որ և արժանի է մեր զըրութեան կամ Ս. Մեսրովայ ուսմատեզնաց մէկն ըլլալու:

այսպէս երգէ հին գանձասաց մը ,  
(Պէտք) .

“ Ով անվեհեր փութոյն պլնդու .  
,, թեան՝ ’ի գիւտ հանձարոյ սրբոց  
,, թարգմանչացն . խորհին ստեղծա-  
,, նել տառս զծագրաց նշանակ խօ-  
,, սից հայկական լեզուիս . որով վաղ-  
,, անցեալքն յիշատակին և մեկնեալքն  
,, դէմ յանդիման խօսին : Հայս հոգ  
,, զարթուցեալ սքանչելին Աահակ ,  
,, զարմն վեցերորդ սրբոյն Պարիգորի .  
,, զոյն առ նովաւե զոյդ ընդ նմին աս  
,, տուածաբանակ հայրն սուրբ Ա'ես-  
,, րովպա . որեւ զըղձալի պարգևս տառիցն  
,, ընկալաւ յլստուծոյ ’ի մեծ գթու-  
,, թեանցն : — | Եր Քրիստոս , պահ-  
,, պահիչ աշակերտաց երջանիկ սրբոց  
,, թարգմանչացն , աղաչեմք , : . . . .

“ Պարաւորական տառից առլըրմամք  
,, մեծապէս խընդայր տէրն սուրբ Աա-  
,, հակ . իսկոյն ձեռնարկէր ’ի թարգ-  
,, մանութիւն մարգարէականն աս  
,, տուածխօսութեանց . ժողովեալ ման-  
,, կունս ’ի վարժ դպրութեան՝ աձե-  
,, ցուցանէր զուսումն իմաստից , ջամ  
,, բելով զկաթն նշանագրացն առնէր  
,, վարդապետս և պատմաբանողս , զի  
,, յաջորդք հարանցն վարդապետաց լի-  
,, ցին աշակերտքն պայծառագոյնք :  
,, | Եր Քրիստոս , և այն , :

“ | Եւ ես ’ի զօրագոյն զօրութիւն  
,, գնալով գրաւորականին վարժից կըր-  
,, թութիւն , պարզ գրագիտութիւնն  
,, զարգանալով ’ի քերթողականն ա-  
,, րուեստ յառաջիւր . որոց առաջին  
,, մեզ հայրքերթողաց պայծառն Ա'ովլ  
,, սէս այն Խորենացին . նախնին աշա-  
,, կերտ սրբոյն Ա'եսրովպայ ՚ի քերս  
,, բայից հզօր քան զնա . համազօր նմին  
,, Քովսէփ Պաղնացի . նորուն վարժա-  
,, կից Խզնակ Խողբացի . Կայաղթըն  
,, Դաւիթ և սուրբն Խորիւն . և միա-  
,, համուռ դաս քերականացն , որք աս  
,, տուածեղէն վարդապետութե փար-  
,, թամացուցին զհայաստանեայս : | Եր  
,, Քրիստոս , պահապանիչ աշակերտացս  
,, երջանիկ սրբոց թարգմանչացն , ա-  
,, զաչեմք , :

Պարագլուխ թարգմանչաց և մա-  
տենագրաց ինքնին Ա . Աահակ՝ քա-  
հանայապետի արժանաւոր կարգերը  
հոգալով յառաջ քան զայլս Ձեռնա-  
դրութեանց կարգը գրեց . ինչուան այն  
ատեն գործածուած Ա . | ուսաւորչայ  
յունարկէն շինածը փոխելով և ընդար-  
ձակելով . և յամին 410 նաւասարդի  
տօներուն , տարւոյն սկիզբը (այն տարի  
նաւասարդն էր ’ի 16 օգոստոսի) հրա-  
տարակեց զայն հանդիսապէս . անշուշտ  
ձեռնագրելով բազմութիւն եկեղեց-  
ւոյ սպասաւորաց , քահանայից , և թե-  
րևս եպիսկոպոսաց այլ : Ա,ոյն կամ յա-  
ջորդ տարին՝ թագաւորէն և բոլոր  
եպիսկոպոսաց ուխտէն ինդրուելով  
յանձն առաւ գլուխ կենալու Աստուա-  
ծաշունչ գրոց թարգմանութեանը . և  
ընդ Ա . Ա'եսրովպայ՝ բոլոր եկեղեցա-  
կան պաշտամանց և ծիսից , այսինքն  
Մալոց ըսուած գրոց , մասն մի թարգ-  
մաննելով ’ի զանազան հարց և մասն մի  
նոր շարադրելով , և մասամք Ա . | ու-  
սաւորչայ գրուածները փոխելով ’ի հայ:  
Ինդհանուր թարգմանութեանց ըս-  
կիզբն սեպուի 411-2 տարին , և վերջն  
426 . այս 14 տարուան միջոց Մալոց .  
և Աստուածաշունչզիրք հայերէն գրա-  
գրութեամբ քաջին Ա'ովսիսի Խորենա-  
ցւոյ որ Ա . Ա'եսրովպայ քեռորդին էր .  
և Ա . Աահակայ Գրիչն՝ թարգմանու-  
թեան երկրորդ տարին Ա . Աահակ  
յլ Ամիածին ըլլալով , (ուր և կ'երեկի  
թէ այն ատեն նորոգեց Ա . Հափիսի-  
մեայ լուսաւորչաշէն մատուոը , և այն  
հրաշագեղ կուսին տապանին վրայ կո-  
խեց իր հայրապետական կնիքն այլ  
| ուսաւորչայ կնքոյն քով ), հոն հը-  
րատարակեց ննջեցելոց Աշխարհանոցի  
կարգը . իսկ Քահանայալաղը և Հոգե-  
հանգիւոը՝ զոր Ա ազարիկ թարգմա-  
նիչն բերած էր . Ա . Խփրեմայ շինածը  
ասորերէն , ’ի հայ փոխելով և աւելցը-  
նելով՝ հրատարակեց տասն տարի ետե-

1 . Ա . Սահակայ գրագիրն կամ գպրապէտն  
կ'անուանի Մովսէս թարգմանիչ , երբեմ Կիտ-  
ւայի եղբեմն խորէնացի գրուած :

|| Արիշ կանոններէն միայն Սերնօրհնեաց թուականն յայտնի է, յամին 443-4 հրատարակուած . մնացեալքն այլ այս միջոցիս ումանք 'ի || . Աահակայ և շատն այլ 'ի || . Աեսրովպայ կարգաւորեցան, անոր համար իր մականուամբն Մաշտոց ըսուեցաւ գիրքն, կամ թէ ինքն Մաշտոց<sup>1</sup> ըսուեցաւ գրոց պատճառաւն, որ կ'ըսուի ևս Օբհուանիաբէր : Աեր Տժնացոյն այլ ըստ հայ և հուոմ ամոց ինքն || . Աահակ նախ կարգաւորեց, և ինչուան հիմա գտուի իր գըրածն այլ, յետոյ փոփոխածներէն զատ : Ուարգմանութեանց գլուխ գործոց եղաւնախայիշեալ Աստուածաշրանչգիրք, որ և || . Աահակայ անթիւ յիշատակաց և պարծանաց պարծանքն է հիմա մեր մէջ . զոր նախ 'ի Հայաստան գըտուած ասորերէն գրուածէն թարգմանեց, վերջը յունարէն Խօթանասնից թարգմանութենէն սրբագրեց, կամ նորէն թարգմանեց . և այլ վերջը՝ Դիքեսոփի ժողովէն ետե՝ երբ թարգմանից բերին աւելի ընտիր և ստոյգ Խօթանասնից օրինակ մը, անոր համեմատեց՝ և փոփոխեց առաջին թարգմանածն<sup>2</sup>. և վերջապէս վերջին ձեռք գընելու և ըստ կարելոյն կատարելագործելու համար, աշակերտներէն քաջագոյնները (յորս Աովսէս Խորենացի, Դաւիթ, Խղիշէ և այլք) խաւրեց յլ զեքսանդրիա, որպէս զի տիրաբար հըմտանան յոյն լեզուին, և ամեննեին անտարակոյս և հաւատարիմ ըլլայ թարգմանութիւնն . բայց աշակերտաց անյագուստումասիրութիւնն և ընթերցմունքն զիրէնք ուշացուցին Դյեքսանդրիոյ հարուստ գրատանց, և || . Խիւրզի վարդապէտարանին մէջ, և երբ դարձան 'ի Հայս՝ զիրէնք զրկող մեծ վարդապէտն վախճանած էին :

|| . Աահակայ հեղինակօրէն շարադրածոց մէջ՝ մաշտոյի քանի մը կանոն .

1. Մաշտոց անուամբ կաթուղիկոս մ'այլ ունիք, թարուն վերջերը . զսա այլ ումանք կարդիր սեպէն այդ գրոց . և անոր համար հին մաշտոց ետևն գտուի այդ կաթուղիկոսին վարքն :

2. Տես վասն թարգմանութեան Ս. Գրոց 'ի Բարձակեց 1850, երես 212, և 1851, երես 230:

ներէն զատ, գլխաւորքն են Աւագ շաբախու շարականք (բաց 'ի քանի մը օրհնութիւններէ), սկսեալ 'ի Պաղարու յարութեան ահեղավսեմերգոյն : || . սօր գողով 'ի Խեթանիա՝ քո ամենաց զօր հրամանաւդ ձայնեցեր Պաղարու, և գողացաւ մահ . դժոխք պար, տեցաւ, ասկականութիւն լուծաւ . կենդանարար Վրիստոս կեցո զմեզ . մինչեւ 'ի վսեմախաղաղ յետին նուագն Վրիստոսի թաղման . " || . Ար արարիչդ ես արարածոց, հանգուցեալդ 'ի քերովմէս, վիմով կնքեցար յերկրի . : Այս հեղալաց խորամուխ լեզուին երանից՝ յարմարցուց երաժշտական եղանակներն այլ . վասն զի այս զմայլելի արուեստին այլ քաջահմուտ էր : Ժամագրոց աղօթից այլ մէկ մասին հեղինակն է || . Աահակ, մնացելոց՝ աշակերտքն Դիկւտ և Հոյհան, և այլք յետոյ : Պատրագամապայց մ'այլ ունի հիմակուան գործածուածէն աւելի Ճնշաբան և Ճշգաբան : Այսու թէ իր մաստենագրական հանձնարոյն աներկրայ հաւաստիք են, և թէ իր եկեղեցական կարգաց և հոգեսիրութեան խնամոցն . որոց համար բայց յայսպիսի սրաշտամնց կամ սրբազն գրոց, շատ անգամ ժողովներ ըրաւ եպիսկոպոսաց, և արժանաւոր քահանայապետութեան կանոններ, խրատներ, կոնդակներ հրատարակեց . յորոց մնան հիմա վեց կամ եօմն խոհական և յստակախօս բանք, առ առ Խպիսկոպոսունս, թ . առ Վորեպիսկոպոսունս, թ . առ Վահանայս և Անականս . թ . վասն եկեղեցւոյ և վանաց, և տրից կամ նուիրաց ժողովը գրդեան 'ի վանս . Ե . վասն տնտեսութեան եպիսկոպոսաց եկեղեցական նուիրաց . թ . գարձեալ վասն նուիրաց եկեղեցւոյ, թէ որպէս բաժնելու է եկեղեցւոյ սպասաւորաց : Այս խրատներս || . Դրիգորի գրած կանոններէն առնելով ընդարձակած է, ինչպէս ինքնին վկայ է, և իր կաթուղիկոսութեն առաջին տարիներն հրատարակեց յունարէն, և յետ գիւտի գրոցն՝ հայերէն . անոնց հետ ուրիշ կարծ կանոններ այլ որ յա-

նուն Ա. Առաւարչին պահուին ցարդ՝ ի կանոնազիրս մեր : Ա. Աահակայ ամենայն գրուածոց լեզուն սքանչելի յըստակութիւն, մաքրութիւն և ողորկութիւն մ'ունի հանդերձ վսեմութեամբ, զոր իր հոգեկիր և արիւնաժառանդ Ա. Շնորհալիէն զատ՝ թերես ուրիշ մը չկրցաւ ստանալ նոյն աստիճանի :

Ի՞շ աստուածատուր և ամենահարկաւոր եկեղեցական և ուսումնական շնորհքները պատրաստելէն ետեւ, իր բոլոր ազգին և վիճակին մէջ ծաւալելու այլ ջանաց մեծն Խաչակ . Պարսից բաժնին մէջ անաշխատ ընդունելի ըրաւ, բայց Հունաց բաժնին մէջ դժուարութիւն կրեց . երկու տէրութեանց մէջ կռուոյ պատճառ չըլլալու համար, քիչ մ'այլ իրարատեցութեամբ՝ յունաբաժնիք խորչէին ՚ի Պարսկահայոց . մինչեւ ոչ հայերէն դպրութիւնը ընդունեցան, և ոչ Ա. Աահակայ օրհնութիւնը . այլ ՚ի Ասարիոյ արքեպիսկոպոսէն կ'առնուին ձեռնադրութիւնն այլ . Ա. Աահակ փորձ մը փարձելէն ետեւ՝ առ ժամանակ մի լոեց և ետեւէ չեղաւ . մանաւանդոր այն տարիներն Կոստանդնուպօլսոյ աթուոյն յաջորդութեան մէջ այլ շփոթութիւն կար . մինչեւ որ շատ տարիէ ետեւ (420) ստիալուելով Հունաց բաժնը երթալ, և նորէն հոն իր արժանի պատիւը չգտնելով, թուղթ գրեց առ կոյսրն Ուեղոս Փոքր և առ հայրապետն Իտակիոս, նուիրակ խաւրելով իր փոխանորդը, զլ . Ա. Եսրովայ և իր թոռը՝ Ա արդան . կայսրն և հայրապետն նախ մեղադրեցին Ա. Աահակայ՝ աւելի Պարսից և Իսորւոց կողմէ կենալը, և հայերէն զրոց գիւտին համար Ա. Սոկեբերանին խորհուրդ չիհարցնելն . (չյիշեցին՝ որ այն ատեն իրենք զլ Ա. կեբերան կու հալածէին ՚ի սառամանիս հիւսիսային Փոքր Իսիոյ, և Հայք կ'օթևանէին զնոս .) վերջապէս հաւանեցան որ Ա. Աահակ հովուէ յունաբաժին Հայերն այլ և հոն այլ զըստիներ բացուին հայերէն դարրութեամն . Ա. Եսրովայ այլ յունական վար-

դապետութեան աշտիճան և պատիւտալով յետ դարձուցին : Ա. յապէս զբոլոր Հայաստան աշակերտեցին Աահակ և Ա. Եսրովայ . և խնամքնին տարածեցին անկէ դուրս այլ իրենց զրակից և մասամբ թեմակից ազգաց վրայ, Ա. բաց և Ա. զըստինից, որաց լեզուին գրերն այլ հնարեց Ա. Ա. Եսրովայ, և սուրբ գրքերը թարգմանել տալ սկսաւ :

Յունաց բաժնին մէջ եղած ատեն՝ Ա. Աահակ իմացաւ որ հոն իր վիճակելոց մէջ չար և այլանդակ ազանդ մը կայ, զոր Բարիստէոն կ'անուանեն պատմիչք մեր, և ոչ այնքան մտաց չարափառութիւն, որքան բարօւց անբարութիւն կու ցուցընեն . խստիւ ետեւէ ընկաւ այս աղտեղութիւնը վերցնելու, և երբ հարկ եղաւ իրեն նորէն դառնալ ՚ի Պարսից բաժնն (421), յանձնեց Ա. Ա. Եսրովայ որ անաշխառ քննէ դատէ, և անհաւանները պատճէ, անուղանները՝ ձակատնին խարանով այլ նշանելով՝ հալածէ : Ի՞շ բանս թէ այն աղանդին սաստիկ աղտեղութիւնը ցուցընէ և թէ Ա. Աահակայ արիւութիւնն . որ յայլն քաղցր և հեզ, զիջող և համբերող, ուր որ Իստուծոյ իրաւանց վրէժինդրութիւնն յանձնած էր իրեն՝ հոն արդար և անաշխառ էր . զնոյն արթնութիւն ցըցուց յետոյ նեստորականաց և ուրիշ աղանդաւորաց գէմ . զնոյն իր կանոնական գրոց մէջ այլ կու սպառնայր . և զնոյն խրատ զրեր շատ տարի ետեւ առ Ա. Պատկղ աշակերտ և աթուաժառնդ Ա. կեբերանի, տրտմախառն յիշատակաւ իր ազգին վիճակին . որ անսեր ըլլալով այն ատեն՝ կու դժուարացներ կաթուղիկոսութեան տիրաբար իշխանութիւնն այլ . իսկ դուք կ'ըսէր ՚մագաւորս ունիք՝ որ զհոգ, ՚ Իստուծոյ յանձին բարձեալ բերեն, ՚ և ... կարող են զփուշն ՚ի միջոց սըր, ՚ բել, ՚ վասն այնորիկ ՚պարտ և ՚ պատշաճ է ձեզ որ ՚ի մեծամեծ իշ, ՚ խանութիւնդ վայելէք՝ նախանձել, ՚ զնախանձն ՚ Իստուծոյ և ՚ի գլուխ վարել զայնպիսի նախանձու վրիժոց, ՚ հատացմանս, և ոգով և մարմա-

„ ջանալ՝ զի բարձցին ՚ի միջոյ եկեղեց-  
„ ւոյ ՚Քրիստոսի անուանարկ անօրէն  
„ ամբարձութեն գայթակղութիւնք „ :  
՚ Այս թուղթու սուրբ հայրապետն մեր  
մահուընէն քիչ տարի առաջ գրած է ,  
երբ ինքն կաթուղիկոսի քաղաքական  
կամ իշխանական տիրութենէն հրա-  
ժարած , միայն աստուածային տիրական  
իշխանութիւնը անհրաժեշտ կու վա-  
րէր , անդադար վարդապետութեամբ և  
հովուութեամբ : ՚ Այս ցաւալի և սրխ-  
րալի գէպքը պէտք է յիշեմք , Ո . Աա-  
հակայ քաղաքագիտութիւնը և քաջ  
ազգասիրութիւնն այլ լաւ ճանաչելու  
համար :

Կը շարունակուի :

Հ . Ղ . Մ . Ա .

---

### Եռունկ:

( Տես երես 243 )

՚ Իբրև քրիստոնեայ և պաշտօնեայ , իր  
կրօնակցացը բարեսպաշտութեան և բա-  
րի վարուց օրինակ եղած է : ՚ Հեղի վա-  
րուցը քան թէ գրուածոցը Ճարտասա-  
նութեամբ առաքինութիւնը կը քարո-  
զէր : ՚ Իր զիշերներն յայտնի կը ցուցընեն  
որ սրտին համեմատ կը խօսէր . և նոյն  
իսկ այն ուրիշներուն սրտին մէջ բարոյ-  
ական և կրօնական Ճմարտութիւնքն ,  
որով իր հոգին սնած էր , արմատացնե-  
լու փափաքն ու եռանդն է՝ որ իր քեր-  
դուածոյն պակասութեանցը մեծ մա-  
սին պատճառ եղած է , մտածելով զայն  
իբրև առանձին մատենագրական գործ  
մը : ՚ Ի՞ և նոյն հետեւութիւնքը և մի  
և նոյն սկզբունքներն անդադար կը  
բաժնէ , կը համառօտէ և կը կրինէ :

՚ Հաւաստի է թէ հասարակաց առջեւ  
անտարբեր ոգւով չէր խօսեր : ՚ Իիրակի  
մը ՚ Աէնդ-Ճէյմ քարողելու ատենը ,  
տեսնելով որ չիկրնար բոլանդակիր Ճար-  
տասանութեամբը ունինդրաց ուշա-

գրութիւնն իրեն գրաւել , ինքն որ զգայ-  
ուն և ըսածին խորը թափանցած  
մարդ էր , յանկարծ խօսքը կտրեց , և  
ամպիոնին վրայ սկսաւ արցունք թա-  
փէլ : ՚ Ոչ ոք կը համարձակէր իրեն դի-  
մաց կրօնքի և բարուց վրայ ծաղրա-  
բանել . և ըստ հարկին իր կենդանի և  
կրակոտ երևակայութեամբը՝ բուն անգ-  
ղիական և կծու երգիծաբանութիւն  
մը ընելով , ծաղրողները կը լուցնէր :

՚ Անական վսեմ հանձար ունէր . իսկ  
բնաւորութիւնը ծանր էր և լուրջ :  
՚ Վարդկային վիճակին վրայ ամենա-  
բարձր տեսութեամբ կը մտածէր , հա-  
մարելով զայն իբրև անմահ էակ մը ,  
որ որ մը տիեզերաց արարչին հետ  
կենակից պիտի ըլլայ : ՚ Աարոյական  
Ճմարտութիւնք՝ իրեն համար ան-  
ցողական գաղափարներ չեին , որ քանի  
մը վայրկեան մտածելով կ'անցնին , և  
վերջը աշխարհի յուզմանց մէջ կը մոռ-  
ցուին : ՚ Նդադար անոնց վրայ մտածե-  
լով , իրեն համար խորին զգացմունքներ  
և հոգւոյն ընտելական հանգամանքներ  
դարձներ էին , որոնք իրենց պատկերն և  
զրոշմը իրեն ուրիշ գաղափարացը վրայ  
ալ կը տպաւորէին : ՚ Փապքալի հան-  
ձարն աւելի իրենինին հետ նմանու-  
թիւն մը ունի , ազդուութեամբը , խո-  
րութեամբը , նոյն կարգի գաղափարնե-  
րովն և նոյն տեսակ երևակայութեամ-  
բը :

՚ Իր ժամատունն եղած ժամանակը ,  
սովորաբար օրուան մէջ քանի մը ժամ  
եկեղեցւոյն գերեզմանատանը մէջ պը-  
տըտելով կ'անցընէր : ՚ Իր քերդուածէն  
ալ կը գուշակուի որ յաճախ զիշերը կը  
հսկէր կամ կ'ելլէր մտածելու կ'եր-  
թար : ՚ ատ մը մտածութիւնք և զգաց-  
մունք կան մէջը որ ցորեկ ատեն մարդ  
չզգար , և զիշերուան երկինքը մենա-  
ւոր դիտողին միտքը միայն կրնայ ըս-  
տեղծէլ : ՚ Մէն մարդ երբեմն դիտած  
կ'ըլլայ թէ ինչողէս տարբեր են այս  
խաւարի ու լուրութեան ժամերուն ը-  
րած ազդեցութիւնքն : ՚ Այս թանձր և  
մթին գոյներով կը թաթաւէր ՚ յունկ